# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԴՄ-01

ք. Երևան «11» «վեցերորդ» 2022թ.

Վարչապետի աշխատակազմը, ի դեմս Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Բագրատ Բաղալյանի (այսուհետ՝ Աշխատակազմ), որը գործում է Աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Կոնդի առանձնատների տնտեսություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ ի դեմս Կազմակերպության տնօրենի լիազորությունները կատարող Անժելիկա Շապովալովայի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա մյուս կողմից, (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01 բաժնի, 03 խմբի, 03 դասի «1136. ՀՀ Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի «11010. ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գերատեսչական առանձնատների և տարածքների շահագործում և սպասարկում» միջոցառման (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն Պայմանագրով Աշխատակազմը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Որոշմամբ նախատեսված տարեկան կտրվածքով՝ մինչև 469 823 500 (չորս հարյուր վաթսունինը միլիոն ութ հարյուր քսաներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ դրամաշնորհի գումար (ներառյալ ավելացված արժեքի հարկը), որից 467 823 500 (չորս հարյուր վաթսունյոթ միլիոն ութ հարյուր քսաներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը որպես ընթացիկ դրամաշնորհ, 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամը՝ կապիտալ դրամաշնորհ, Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով հաստատված տարեկան հատկացումների եռամսյակային (աճողական) բաշխվածությանը համապատասխան՝ ամսական համամասնություններով՝ համաձայն Հավելված N 3-ի, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և սույն Պայմանագրով սահմանված կարգով:
1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ Միջոցառումներ) ներկայացված են սույն Պայմանագրի Հավելված N 1-ում:

## 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Աշխատակազմն իրավունք ունի՝
2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.
2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն Պայմանագրի 5.2-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն Պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ սույն Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Միջոցառման արդյունքն Աշխատակազմի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Աշխատակազմի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Աշխատակազմը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել Ծրագրի (առանձին Միջոցառումների) իրականացման ուսումնասիրություն՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման համակարգի մարմինների հետ.

2.3.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված Միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում, եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված Միջոցառումը համապատասխանում է Ծրագրի և սույն Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել Ծրագրի շրջանակներում Աշխատակազմի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2014 թվականի հոկտեբերի 24-ի N725-Ն հրամանով հաստատված հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) սույն Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել Աշխատակազմի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Սույն Պայմանագրով սահմանված կարգով Աշխատակազմին ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Աշխատակազմի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. Աշխատակազմի կողմից առանձին Միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Աշխատակազմի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:

2.4.7. Սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում Աշխատակազմին ներկայացնել տեղեկություններ Պայմանագրի շրջանակներում հաշվարկված և պետական բյուջե վճարված ավելացված արժեքի հարկի գումարների վերաբերյալ:

2.4.8. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան.

2.4.9. Պայմանագրով նախատեսված Միջոցառումների տարեկան արդյունքները Աշխատակազմի կողմից ընդունվելուց հետո Կազմակերպությունը Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը:

## 3. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

3.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է Աշխատակազմի և Կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ՝ համաձայն Հավելված N 4-ի:

Մինչև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կազմակերպությունը Աշխատակազմին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը և հաշվետվությունը:

3.2. եթե իրականացված Միջոցառումը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Աշխատակազմը Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

3.3. եթե իրականացված Միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Աշխատակազմը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում Աշխատակազմը ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կազմակերպության նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4. Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Աշխատակազմը չի ընդունում Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված Միջոցառումը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահման-ված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

## 4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությունը յուրաքանչյուր ամսվա համար, մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը, դուրս է գրում հարկային հաշիվ: Հարկային հաշվի գումարը, սույն Պայմանագրով սահմանված դրամաշնորհի գումարի հաշվին, հաշվարկվում է Կազմակերպության տվյալ ամսվա փաստացի (հաշվեգրված) կատարված ծախսերի չափով: Տարեկան կտրվածքով հարկային հաշիվների հանրագումարը չի կարող գերազանցել 1.1 կետում նշված գումարը:

4.2. Կազմակերպությանը վճարումները կատարվում են անկանխիկ ձևով, յուրաքանչյուր ամիս՝ 1.1 կետով սահմանված ամսական համամասնության չափով:

## 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2 Պայմանագրի Հավելված N 1-ում նշված Ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում Կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն Աշխատակազմի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները Պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում.

5.3. Պայմանագրով նախատեսված Ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ Պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով.

5.4. Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Միջոցառման իրականացման արդյունքում Կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ.

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ.

5.5. Աշխատակազմի կողմից Պայմանագրի 3.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով.

5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց Պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը՝ մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

## 7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

## 8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Սույն Պայմանագրի NN 1-4 Հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մաս:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է Պայմանագրի Կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԱՇԽԱՏԱԿԱԶՄ՝ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՝ |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ<br>Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011030864<br>ՀՎՀՀ 02505554<br><br>_____ Բ. Բարսեղյան<br>Կ.Տ. | «Կոնդի առանձնատների տնտեսություն» ՊՈԱԿ<br>Հասցե՝ ք. Երևան, Ձորափի 74<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900018006032<br>ՀՎՀՀ 02544888<br><br>Տնօրենի լիազորությունները կատարող<br><br>_____ Ա. Շապովալովա<br>Կ. Տ. |

**Հավելված N 1**
**2022 թ. դեկտեմբերի 11 -ին**
**կնքված N ԴՄ-01 պայմանագրի**

# ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

| NN ը/կ | Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | նկարագիրը | կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները | ակնկալվող արդյունքները և դրանց գնա-հատման չափանիշները | միջոցառման իրականացման վերջնաժամկետը | հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը | պահանջվող գումարը (դրամ) |
| 1 | << բարձրաստիճան պաշտոնատար անձանց գերատեսչական առանձնատների և տարածքների շահագործում և սպասարկում | << բարձրաստիճան պաշտոնատար անձանց գերատեսչական առանձնատների և տարածքների շահագործման և սպասարկման ծառայություններ | 1. Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնատար անձանց գերատեսչական առանձնատների սպասարկում (ներառյալ՝ կեցության ապահովում) և շահագործում:<br>2. Կոնդի առանձնատների տնտեսության տարածքի և օժանդակ կառույցների՝ իրեն ամրացված **18250.1 քմ** ընդհանուր մակերեսով շենքերի, շինությունների, **25.31319 հեկտար** հողատարածքի, **290.8 քմ** քոթեջի և **0.0208 հեկտար** հողատարածքի ընթացիկ պահպանում, սպասարկում և շահագործում, ինչպես նաև Կազմակերպության գործունեության | Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնատար անձանց գերատեսչական առանձնատների տարածքների բարեկարգում և բարելավում, խնամք | 31 դեկտեմբեր 2022թ. | Ամսական՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ, տարեկան հաշվետվությունները՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 10-ը | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | կազմակերպում, նրա պահպանում, խնամքի, բարեկարգման և բարելավման աշխատանքների և կանոնադրական այլ նպատակների իրականացում:<br>3. Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնատար անձանց գերատեսչական առանձնատների կահավորման, տեխնիկական վերազինման, ինչպես նաև Կազմակերպության կարիքների համար հիմնական միջոցներով ապահովման կազմակերպում՝ ըստ անհրաժեշտության: | | | | | |
| Ընդամենը | | | | | | | | 469 823 500 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
2022թ. _____ ____ -ին
կնքված N ԴՄ-01 պայմանագրի

**Դրամաշնորհային հաշվետվություն N_____**

1. **Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | |
| Դրամաշնորհի N | |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | |
| Հաշվետու ժամանակահատված | |
| Ներկայացման օր | |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

| |
|---|
| |

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

| |
|---|
| |

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:**

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

| ԱՇԽԱՏԱԿԱԶՄ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| --- | --- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 3
2022 թ. մարտի 11-ին
կնքված N ՋԻԴ-01 պայմանագրի

# ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Ամրագրման վերջնաժամկետ»

| Ամսաթիվ | Ամսական գումարներ | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| Միջոցառման անվանումը՝ Հասանելի ժամանակաշրջանում 4 իրականացվող ամսական ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | | |
| Ընդամենը | 4637 | 4655 | | | | | | | | | | | |
| Տնտեսությունների ոլորտներում ներդրումների ծավալը | 77.803.900 | 500.000 | 116.955.900 | 500.000 | 155.607.800 | 1.000.000 | 194.759.800 | 1.000.000 | 233.911.800 | 1.000.000 | 272.563.700 | 1.500.000 | 311.715.700 |
| Ներդրումների ոլորտներում ներդրումների ծավալը՝ ներառյալ ներդրումային նախագծերի մասնակցությամբ կազմակերպված միջոցառումների ծախսերը | 1.500.000 | 350.867.700 | 1.500.000 | 389.519.600 | 2.000.000 | 428.671.500 | 2.000.000 | 467.823.500 | 2.000.000 | 467.823.500 | 2.000.000 | 78.303.900 | 117.455.900 |
| Ընդամենը | 1.500.000 | 350.867.700 | 1.500.000 | 389.519.600 | 2.000.000 | 428.671.500 | 2.000.000 | 467.823.500 | 2.000.000 | 467.823.500 | 2.000.000 | 78.303.900 | 117.455.900 |

Կանոնադրական կապիտալ՝

Կ.Տ.

/ստորագրություն/

Գլխավոր տնօրեն՝

Կ.Տ.

/ստորագրություն/

Հավելված N 4
2022 թ. _____ ____ -ին
կնքված N ԴՄ-01 պայմանագրի

| Կազմակերպություն | Աշխատակազմ |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

**ԱԿՏ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

| N | Իրականացված միջոցառման | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | գործառույթի համառոտ նկարագիրը | արդյունքը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/ |
| | | | ըստ պայմանագրի | փաստացի | ըստ պայմանագրի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 11010 | ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գերատեսչական առանձնատների և տարածքների շահագործում և սպասարկում | 117,455.9 | 234,911.8 | 352,367.7 | 469,823.5 |
| | | այդ թվում՝ ըստ կատարողների | | | | |
| | | *ՀՀ վարչապետի աշխատակազմ* | *117,455.9* | *234,911.8* | *352,367.7* | *469,823.5* |
| | | այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ | | | | |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | 117,455.9 | 234,911.8 | 352,367.7 | 469,823.5 |
| | | ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ | 117,455.9 | 234,911.8 | 352,367.7 | 469,823.5 |
| | | ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 117,455.9 | 234,911.8 | 352,367.7 | 469,823.5 |
| | | Ընթացիկ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին | 116,955.9 | 233,911.8 | 350,867.7 | 467,823.5 |
| | | - Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային | 116,955.9 | 233,911.8 | 350,867.7 | 467,823.5 |
| | | Կապիտալ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին | 500.0 | 1,000.0 | 1,500.0 | 2,000.0 |
| | | - Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային | 500.0 | 1,000.0 | 1,500.0 | 2,000.0 |

**Համաձայնագիր N ՊՄ-01/1**

**11 փետրվար 2022 թվականին կնքված «Դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» N ԴՄ-01 պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

ք. Երևան «14» «փետրվար» 2022թ.

Վարչապետի աշխատակազմն (այսուհետ՝ Աշխատակազմ), ի դեմս Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Բագրատ Բաղալյանի, մի կողմից, և «Կոնդի առանձնատների տնտեսություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս Կազմակերպության տնօրենի լիազորությունները կատարող Անժելիկա Շապովալովայի, մյուս կողմից, (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Աշխատակազմի և «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի միջև «30» դեկտեմբեր 2021թ. կնքված «Պետության կարիքների համար փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայությունների մատուցման պետական գնման» N ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-22/3-1 պայմանագիրը՝ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Պայմանագրի գինը նվազեցնել 82.000 (ութսուներկու հազար) ՀՀ դրամի չափով, և 1.1 կետում Պայմանագրի գին սահմանել 469 741 500 (չորս հարյուր վաթսունինը միլիոն յոթ հարյուր քառասունմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը:

1.1.2 Պահմանագրի Հավելված N 3-ը փոխարինել Հավելված N 3.1-ով:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, գործում է մինչև Կողմերի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Համաձայնագիրը բաղկացած է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԱՇԽԱՏԱԿԱԶՄ՝ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՝ |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ<br>Հասցե՝ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011030864<br>ՀՎՀՀ 02505554<br><br>----------Բ. Բաղալյան<br>Կ.Տ. | «Կոնդի առանձնատների տնտեսություն» ՊՈԱԿ<br>Հասցե՝ ք. Երևան, Զորափի 74<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900018006032<br>ՀՎՀՀ 02544888<br><br>Տնօրենի լիազորությունները կատարող<br><br>---------- Ա. Շապովալովա<br>Կ. Տ. |

Հավելված N 3.1
2022 թ. Դեկտեմբերի 14 -ին
կնքված N **ԴՄ-01** պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| անվանումը | Տնտեսագիտա-կան դասակարգման հոդվածը | Միջոցառման | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գերատեսչական առանձնատների և տարածքների շահագործման և սպասարկման ծառայություններ | 4637 | | 77.721.900 | 116.873.900 | 155.525.800 | 194.677.800 | 233.829.800 | 272.481.700 | 311.633.700 | 350.785.700 | 389.437.600 | 428.589.500 | 467.741.500 | 467.741.500 |
| | 4655 | | 500.000 | 500.000 | 1.000.000 | 1.000.000 | 1.000.000 | 1.500.000 | 1.500.000 | 1.500.000 | 2.000.000 | 2.000.000 | 2.000.000 | **2.000.000** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | **78.221.900** | **117.373.900** | **156.525.800** | **195.677.800** | **234.829.800** | **273.981.700** | **313.133.700** | **352.285.700** | **391.437.600** | **430.589.500** | **469.741.500** | **469.741.500** |

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**

---

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

---

/ստորագրություն/
Կ.Տ